GEOGRAPHICAL FOUNDATIONS OF ARMENIAN CIVILIZATION

Armen Nersisyan
Candidate of Geographical sciences, Associate Professor,
Lecturer at the Chair of Geography, biology and chemistry
of Shirak State University

SUMMARY

The article discussed the issue of the identity of Armenian civilization, which was based on the approaches we had proposed earlier to the new theory of "Geography of Civilizations". The study revealed those systemically important components of Armenian civilization that are necessary to reach the local civilizational level. The practical application of the conclusions will create the life environment necessary to preserve the identity of these components, necessary for the full realization of the potential of own coexistence.

Keywords: civilization, local civilization, pyramidal structure of civilization, types of human coexistence, spatial structure of mankind, spatial process of mankind, systemically forming components of civilization.

ԱՅՍՐԿՈՎԿԱՍ (ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ)՝ ՉԻՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐԱԲԵՄԸ. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿՆԱՐՆԵՐԸ

Լիաննա Անանյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

Հարավային Կովկասը Սև և Կասպից ծովերի միջև տեղակայված համեմատաբար փոքր տարածաշրջան է, սահմանակից է Ռուսաստանին, Թուրքիային և Պարսկաստանին։ Հարավային Կովկասն ավելի փոքր է քան Միացյալ Թագավորությունը, և բնակչությունն համապատասխանում է մոտավորապես Նիդեռլանդների բնակչության քանակին։ Այս կապող օղակը միացնում է Ռուսաստանը Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիան Եվրոպայի հետ, այն ունի ռազմավարական նշանակություն հարավ-արևելյան Եվրոպայի և ավելի մեծ մերձավոր արևելքի խաչմերուկում տեղակայված մեծ և կարևոր տարածաշրջանի զարգացման համար։ Հաշվի առնելով այն հանգամանքը, թե Կովկասյան այս տարածաշրջանն ինչպիսի կարևորություն ունի, այն կարող ենք անվանել Ասիայի, Եվրոպայի և Մերձավոր Արևելքի խաչմերուկ։ Բրոքհաուզի և Եֆրոնի

հանրագիտական բառարանում, որը լույս է տեսել դեռևս 1891թ., Закавказье բառի բացատրության մեջ պարզ բաժանում է կատարվում՝ Արևմտյան Անդրկովկաս (Քութաիսի նահանգ և Սևծովյան տարածաշրջան) և Արևելյան Անդրկովկաս (մյուս բոլոր շրջանները)[1] : Այսպիսով, աշխարհագրորեն, «Կովկաս» տերմինը ներկայացնում է որոշակի տարածք՝ Մեծ Կովկասի լեռնաշղթան, որը գտնվում է Սև և Կասպից ծովերի միջև, և որը իր հերթին բաժանում է Կովկասը 2 մասին՝ Հարավային՝(Предкавказье) և Հյուսիսային (Закавказье): Փաստացիորեն հենց Հարավային Կովկաս տերմինն է բազմաթիվ հակասությունների առիթ հանդիսանում, քանզի այս տարածաշրջանը հարավային է օրինակ Ռուսաստանի համար, իսկ տվյալ տարածաշրջանի բնակչի համար այն ոչ թե Հարավային Կովկաս է, այլ Այսրկովկաս է:

Հասկանալու համար հստակ զարգացումները Այսրկովկասում, օգտակար է ուսումնասիրել այս տարածաշրջանի գենեզիսը: Հարավային Կովկաս հասկացությունը, որպես կապող տարածաշրջան ավել կամ պակաս սահմանված հստակ սահմանները բավականին վերջերս են ծագել: Ներկայիս Այսկովկասի մաս են կազմում երեք ճանաչված պետություններ Հայաստանի Հանրապետությունը, Ադրբեջանի Հանրապետությունը և Վրաստանի Հանրապետությունը, և երկու «կիսաճանաչված» երկրներ՝ Աբխազիայի Հանրապետությունը և Հյուսիսային Օսիան, որոնց անկախությունը ճանաչվել է Ռուսաստանի Դաշնության և ևս մի քանի երկների կողմից, և դեռևս չճանաչված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Այսկովկասը սահմանակից է Ռուսաստանի Դաշնությանը հյուսիսում, հարավում Թուրքիային և Պարսկաստանին է սահմանակից, արևմուտքում՝ Սև, իսկ արևելքում՝ Կասպից ծովերով ողողվող այս տարածաշրջանը զբաղեցնում է 190 000 կմ² տարածք: Եթե

---

[1] Энциклопедический словарь **Брокгауза и Ефрона**, в 86 т. (82 т. и 4 доп.). СПб., 1890—1907гг., ՝՝Закавказье — под этим именем обыкновенно разумеются части Кавказского края, расположенные к Ю от Кавказского хребта, следовательно, губернии Кутаисскую, Тифлисскую, Бакинскую, Елизаветпольскую и Эриванскую, Карсскую область, Черноморский и Закатальский округа. В административном отношении к З. причисляется также и Дагестанская область, лежащая к С от Кавказского хребта. Различают обыкновенно Восточное и Западное З.; к Западному З. относятся Кутаисская губ. и Черноморский округ, а к Восточному — все остальные части՝՝

համեմատենք, ապա Այսրկովկասը իր տարածքով Սիրիայից մի փոքր է մեծ, իսկ Սենեգալից քիչ փոքր։ Բնակչությունը ամբողջությամբ վերցրած կազմում է 16 միլիոն 952 հազար 738 մարդ, որից 2 միլիոն 930 հազարը՝ Հայաստանում/2017թ./, 9 միլոն 862 հազարը՝ Ադրբեջանում /2017թ./, 3 միլիոն 717 հազարը՝ Վրաստանում/2017թ./, 147 հազարը՝ Լեռնային Ղարաբաղում/2017թ./, 53 հազար 532-ը Հարավային Օսիայում/2015թ./ և 243 հազար 206-ը Աբխազիայում/2015թ/։ Այսինքն, օրինակ Այսրկովկասը բնակչության քանակով մոտ է Էկվադորին/16 միլիոն 863 հազար 425 մարդ/2018թ/։ Իր տարածքով և բնակչության քանակով ոչ առաջնային, բայց իր նշանակությամբ համաշխարհային քաղաքականության թատերաբեմում բավականին հետաքրքիր կռվախնձոր հանդիսացող Այսկովկասը գերտերությունների ուշադրության կենտրոնում է մնում, որը բացատրում են թե՛ առկա տարածքային խնդիրներով ու վեճերով, թե՛ բնական ռեսուրս-ներով/որոնց մեջ նաև մարդկային ռեսուրսներն են ընդգրկում/։ Այսուհանդերձ այս տարածաշրջանում են խաչվում մայրցամաքների ուղիները, ուստի բոլոր հնարավոր միջոցներով և ուղիներով գերտերությունները պետք է որ ցանկություն ունենան իրենց ներկայությունն ապահովել այստեղ։

Գերտերությունների շարքում է նաև Չիանստանի Ժողովրդական Հանրապետությունը։

Բավականին երկար ժամակահատված Չինաստանի համար Այսրկովկասը եղել է «անտեսված տարածաշրջան» թե՛ չինական դիվանագիտության, թե՛ տնտեսական քաղաքականության համար։ Սակայն, հատկապես վերջին տասնամյակի ընթացքում Չինաստանն իր ներկայության «խարիսխը» գցել է Այսրկովկասի մատույցներում, որով կապահովի իր երկարաժամկետ ներկայությունը այս տարածաշրջանում, իհա՛րկե այս գործընթացն արագացավ հատկապես 2013 թվականից ի վեր, երբ Սի Ծինփինը ազդարարեց Մետաքսի Մեծ Ճանապարհի «վերածնման» մասին /Մեկ գոտի, մեկ ճանապարհ, ՄԳՄՃ/։[2]

[2] The Yidai Yilu project is made up of the Silk Road Economic Belt, which connects China to Europe across the Indian Ocean. Initially translated into English as 'One Belt One Road' or OBOR, it became the Belt and Road Initiative, or BRI, from 2015. For detailed assessment of the political and strategic implications of the BRI, see **N. Rolland**, China's Eurasian Century? Political and Strategic Implications od the Belt and Road Initiative Seattle, NBR, 2017.

Այս ժամանակից ի վեր Չինաստանը առաջընթաց է արձանագրում կովկասյան այս տարածաշրջանում իր ներկայությունն ապահովելով բազմաթիվ ոլորտներում, ֆինանասական աջակցություն տրամադրելով տարբեր ուղղությունների ինտենսիվ աշխատանքների համար, հետաքրքրություն առաջացնելով տեղական իշխանություններին համագործակցելու, արտաքին և ներքին անվտանգության հարցերին ի պատասխան առաջարկելով մշակել ու նորացնել քաղաքական և ձեռնարկատիրական համագործակցության մոդելներ:

Անկախ այն հանգամանքից, որ Պեկինի համար Հայաստանը, Ադրբեջանը կամ Վրաստանը առաջնային հետաքրքրությունների շրջանակում չեն, այսուհանդերձ չինական քաղաքական կտավի կարևոր մասնիկներ են, քանի որ ՉԺՀ-ն Եվրասիական տարածաշրջանում երկարաժամկետ պլաններ ունի: Հետևաբար չինական աճող հետաքրքրությունը պետք է դիտարեկել ավելի լայն ասպեկտով, արձանագրելով որ Չինաստանն այստեղ ունի ավելի հեռահար նպատակներ: Շատերը դա անվանում են հակազդեցություն ԱՄՆ գերակա դիրքին այս տարածաշրջանում, մյուսների համար այս քաղաքական պլանը Ռուսաստանի «զարկերակի» վրա տնտեսական «զեղումներ» առաջացնելն է:

Այնուամենայնիվ չինական փափուկ և մեղմ մեթոդներն են հաջողության գրավականը, որն իրականում սպառնալիք կարող է հանդիսանալ նաև արևմուտքի համար այս տարածաշրջանում գերակայության նվազեցման հարցում:

Եթե փորրձենք համեմատական անցակցնել հակիրճ ՉԺՀ, ԱՄՆ և ՌԴ քաղաքականության մեջ Այսրկովկասում, ապա բավական է նշել, որ չինացիներն ինչպես բոլոր հարցերում, այնպես էլ այս հարցում առաջնորդվում են ոսկե կանոնով, այն է՝ ոսկե միջինը գերադասելի է և կայուն բոլոր պարագաներում: Այսինքն, եթե Չինաստանը որոշել է համագործակցել որևէ երկրի հետ սերտացնելով հարաբերությունները, ապա դա չի արվելու հարևան պետությունների հետ հարաբերությունների մեջ սառնություն կամ սրություն առաջացնելով, այլ լիովին հակառակը՝ Չինաստանը չի դիտարկում առանձին պետությունը միայն իր քաղաքական հետաքրքրությունների շրջանակի մեջ, այլ տարածաշրջանը իր ամբողջության մեջ: Սա մենք կարող ենք տեսնել նաև Այսրկովկասում, որտեղ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումը նշանակում է նույն գործընթացը նաև Վրաստանի կամ

Ադրբեջանի հետ, անկախ առկա խնդիրներից, որոնք առկա են տվյալ հարևանների միջև, երբեմն միայն շեշտը դնելով ֆինանսա-տնտեսական համագործակցության վրա և նշելով, որ բոլոր համագործակցությունները միայն և միայն երկկողմանի շահավետություն և եկամտաբերություն պետք է ապահովեն. ներշնչելով իրենից այսչափ փոքր երկրներին սեփական կարևորությունն արժևորելու և առավել ակտիվ համագործակցելու համար:

Չունենալով քաղաքական բացասական տրամադրվածություն այս տարածաշրջանում, Չինաստանը հանդես է գալիս բացառապես որպես տնտեսական գործընկեր, որն ակնողմնակալություն է որդեգրել, բաց լինելով բոլոր ցանկացողների համար, ովքեր ցանկանում են համագործակցել, անգամ նրանց համար ովքեր հակառակորդներ են, առանց ռազմական կամ ռազմավարական նախագծերի, առանց ձգտումների հասնել տնտեսական ինտեգրացիայի /օրինակ ՌԴ՝ ԵԱՏՄ/ կամ ժողովրդավարական փոփոխությունների /օրինակ ԵՄ՝ Արևելյան գործընկերություն/:

Այնուամենայնիվ, Պեկինը հետապնդում է հեռահար նպատակներ, իսկ ՄԳՄՃ-ն այդ հավակնությունները կյանքի կոչելու ամենաիրական ճանապարհն է. վերափոխել ամբողջ Եվրասիան չինական ուժի «հսկողության» ներքո: Այսկովկասը «չինական քաղաքական մեծ խաղի» կարևոր մասնակից է:

Կարող է տպավորություն ստեղծվել, որ Չինաստանն այստեղ, որևէ հստակ ուղղության վրա չի կենտրոնացել: Իրականում շատ վերլուծաբաններ դեռևս չեն կարողանում հստակ ձևակերպում տալ, թե ի՞նչ ձգտումներ կարող է ունենալ ՉԺՀ Այսկովկասում, բայց այստեղ է, որ չինական քաղաքական մտածելակերպին համապատասխան, Չինաստանն իրեն նպատակահարման տարածաշրջաններում տեղակայում է «դիվանագիտական կրակակետեր», իր համար առավել համապատասխան պահին դրանք օգտագործելու համար:

Հու Ծինթաոյի նախագահության ընթացքում /2002-2012/ հարաբերությունները Չինաստանի և Հարավային Կովկասի/Այսրկովկասի/, ինչպես նաև օրինակ Արևելյան Եվրոպայի դեռևս զարգացման սկզբնական փուլում գտնվող երկրների միջև հարաբերությունները սկսեցին զարգանալ և ամրապնդվել, իհա՛րկե այդ ամենը շատ դանդաղ էր տեղի ունենում: Բնականաբար հատկապես այդ տարիներին, հետսովետական ճահճացումից հետո ամենագրավիչը

երկրի համար կարող է լինել տնտեսական աջակցությունը, վարկերի տրամադրում ձեռնտու պայմաններով և առևտրական հոսքերի ավելացում: Առաջարկելով առավել դուրեկան պայմաններ գնին և որակին համարժեք արտահանման և ներկրման համար: Հիմնականում այս երկներից Չինաստան ներկրում են մատչելի ապրանքներ. Հայաստանից՝ պղինձ, Վրաստանից՝ գինի, Ադրբեջանից՝ հանքային վառելանյութ:[3]

Իհա՛րկե, տնտեսական այն բոլոր լծակները, որոնց միջոցով ՉԺՀ իր ազդեցությունը հաստատեց և ամրապնդեց շարունակական բարելավմամբ դժվար է ներկայացնել հակիրճ, սակայն բացի տնտեսական և առևտրային հարաբերությունների բարելավումից, Չինաստանը միաժամանակ շեշտադրված «փափուկ ուժի» քաղաքականություն է վարում, թերևս ամբողջ աշխարհում՝ իր թիրախային քարտեզում ընդգրկելով բոլոր զարգացած, զարգացող, թերազարգացած երկրները:

Տնտեսական և ֆինանասա-առևտրային հարաբերությունների միջոցով ազդեցության հենման կետեր ստեղծելուց զատ, Չինաստանը նաև ազդեցության գոտիներ է ստեղծում Կոնֆուցիոսի Ինստիտուտների ստեղծումով, հատկանշական է, որ դա արվում է որևէ տարածաշրջանի դեպքում տվյալ տարածաշրջանի բոլոր երկրներում միաժամանկյա: ԿԻ հիմնական և առաջնային նպատակը չինարենի ուսուցումն է, հատկապես թիրախային այն խմբերին, որոնք հետագայում կա՛մ երկկողմանի ձեռնարկատիրական գործունեությամբ կարող են զբաղվեն, կա՛մ կրթական-գիտական հանրությանը, ովքեր կարող են դառնալ մարդկային լավ ռեսուրս ՉԺՀ համար, իր ազդեցության լծակներն ավելի ամրապնդելու համար նաև «գիտական» էլիտայի շրջանում: Իրականում այս կենտրոնները ՉԿԿ-ի/Չինաստանի Կոմունիստական Կուսակցության/ գաղափարախոսության կրողներն են և կատարում են «լրտեսի» դեր, պաշտպանելով միայն սեփական երկրի շահերը և հետաքրքրությունները:[4] Այս տարածաշրջանում առաջին ԿԻ բացվեց Հայաստանում՝ 2009 թ., իսկ Վրաստանում՝ 2010թ.: Ադրբեջանում այսպիսի կենտրոն բացվեց 2011 թ.: Ուշագրավ է, որ

[3]Trading Economics: Azerbaijan exports to China: [Электронный ресурс] URL: https://tradingeconomics.com/azerbaijan/exports/china

[4] C.R. Hughes, "Confucius Institutes and the University: Distinguishing the Political Mission from the Cultural", Issues and Studies, Vol.50, No4, pp.455-83, 2014, [Электронный ресурс] URL: http://eprints.lse.ar.uk

դպրոցները բացվում են պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում, ընդգծելով թե՛ պետական հովանավորությունը /ՉԺՀ/, թե՛ թիրախային խմբերի կրթական ցենզը։

Տեսաբանների կարծիքով այս կենտրոնների ստեղծումը «քողարկում» էր «Նոր մետաքսի ճանապարհում» կովկասյան այս երկրների ոչ ակտիվ ներգրավվածությունը։

Խոսելով փափուկ ուժի չինական տեսլականի մասին անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական նպատակները, ուղղությունները, հիմնական գործիքակազմը, ֆինանսավորման ձևերը և այլ։

Չինաստան. երկիր, որտեղ «փափուկ ուժի» իրականացման համար հիմնարար դրույթներ, կանոնակարգեր, ՉԿԿ պարտիական ծրագրային փաստաթղթեր և որոշումներ են գործում։

Նպատակները և առավելությունները՝

– Ստեղծել նոր և ազդեցիկ միջոցներ և մեխանիզմներ ոչ բռնի ուժի կիրառման համար

– Երկրի բալանսավորված (բալանսավորված) զարգացման համար երկրից դուրս ստեղծել «բարի հսկայի» կերպար

– Սեփական «մշակութային անվտանգության ստեղծումով» ապահովել «փափուկ ուժի» տարածման պետականորեն ոչ ընդունելի ձևերը

– Տնտեսական և ֆինանասական տիրույթների ստեղծում այնպիսի պայմաններով, որոնք կապահովեն ՉԺՀ –ի նկատմամբ աճող հետաքրքրություն

– Ձեռնարկատիրության համար բաց համագործակցային կուրսի ապահովում և այլն։

Հիմնական գործիքակազմը՝

– Պետական Խորհուրդ

– ՉԿԿ Կենտրոնական Կոմիտեի Կենտրոնական կուսակցական դպրոց

– ՉԿԿ Կենտրոնական Կոմիտեի միջազգային կապերի բաժին

– Արտաքին կապերի նախարարություն և կոմերցիայի նախարարություն

– Միջազգային առևտրի զարգացման չինական խորհուրդ

– Չինարենի միջազգային ճանաչման պետական աշխատակազմ

– Հանրային դիվանագիտության ասոսիացիա/2012թ./

– CCTV99, CGTN հեռուստաալիքներ

– Կոնֆուցիոսի Ինստիտուտ /2012թ. - 400 ԿԻ և 535 դասարան/լսարան 108 երկրում, 2018 թ. ԿԻ թիվը հասել է 500-ի, իսկ Կոֆուցիոսի լսարանների/դասարանների քանակը 1113-ի

Ֆինանսավորում՝

– Պետական բյուջե/այդ թվում նաև ՉԺՀ ներդրումների և արտահանումների բանկի միջոցով/

– ԱՏՌ միջոցներ և այլն։

Կառավարման մեթոդոլոգիա

– Կենտրոնացված կառավարում

– Ոչ պետական մասնակիցների մասնակցության լիովին բացառում, նաև որոշումների կայացման հարցում և այլն։

Մրցակցային առավելություններ՝

– Պրագմատիզմ. փափուկ ուժի դերը կենտրոնացված է ավելի շատ իր սեփական ազդեցության լծակների, և չինական արտաքին քաղաքականության ռազմավարության արդյունավետության մշակման վրա

– ՉԺՀ ներդրումային և տնտեսական հնարավորություններ

– ՉԺՀ դրամական միավորի- Յուանի միջազգայնացում

– ՉԺՀ փափուկ ուժի «մշակութայնացում»/ չինական ավանդական մշակույթի միջազգայնացում և վերագովազդում»re-branding»

– Սփյուքում գտնվող չինացիների հետ ակտիվ շփումներ, տեղի համայքներում չինացիների դերի և ազդեցության ավելացում

– Չինական ԿԻ կենտրոնների ազդեցության ավելացում «ճյուղավորման» միջոցով /Ղազախստան -4 ԿԻ, Ուկրաինա-4, Բրազիլիա-5, Մոնղոլիա, -1, Ղրղզստան-10+2 դասարան/ և այլն։

Թիրախային խմբեր՝

– Աշակերտներ/ հատկապես 12-15 տարեկան, ՉԺՀ ում ուսումը շարունակելու ցանկությամբ/

– Ուսանողներ/ հատկապես 2-3 րդ կամ ավարտական կուրսի ուսանողներ, ովքեր նպատակա ունեն մագիստրոսական կրթական ծրագրով ուսանել ՉԺՀ-ում

– Ուսանողներ և ոչ ուսանողներ՝ կարճաժամկետ կամ երկարաժամկետ- լեզուների կենտրոնացված ուսուցում

– Հատկապես մանր և միջին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողներ, ում համար լեզվական խոչընդոտներ հաղթահարելն անհրաժեշտություն է և այլն։

Մինչ չինական տնտեսական զարգացումը տպավորիչ ազդեցություն է գործում աշխարհի վրա, ռեպրեսիական քաղաքական համակարգը և կոմերցիոն մեթոդները վնաս են հասցնում երկրի միջազգային դիրքին: Հենց ընկալման բարելավման համար Պեկինը վերջին տարիներին հասարակական հարաբերությունների բարելավման է ենթարկվել, մի շարք ջանքերով միլիարդավոր դոլարներ ներդնելով ամբողջ աշխարհում:

Դեռևս Հու Ծինթաոյի իշխանության շրջանից/2007թվականից/ ի վեր և արդեն 2011թ. Սի Ծինփինի իշխանության օրոք, ՉԿԿ ԿենտԿոմի 17-րդ համագումարի ժամանակ մի ամբողջ պլենումի քննարկումներ նվիրված էին մշակութային խնդիրներին, իսկ արդեն նիստի ավարտին հայտարարվեց, որ գերակա նպատակը այս համաժողովի «կառուցել սոցիալական-մշակութային գերտերություն»:[5] Եվ արդեն 2014թ. Սի Ծինփինը նշում էր, որ անհրաժեշտ է ուժեղացնել Չինաստանի փափուկ ուժը, տալ ճիշտ և համընդգրկուն պատկերացում դրա մասին և լավագույնս ներկայացնել Չինաստանի ուղերձն ամբողջ աշխարհին: Հենց Սիի կառավարման տարիների սկիզբնական շրջանում «չինական հրաշքը» ի հայտ եկավ ամողջ իր ուժով, նոր նախաձեռնություններով հանդերձ. «Չինական երազանք», «Ասիա-Խաղաղօվկիանոսյան երազանք», «Տնտեսական Մետքասի ճանապարհ», «21-րդ դարի ծովային մետքասի ճանապարհ», «միջպետական հարաբերությունների նոր որակ հզորագույն պետությունների հետ» և շատ այլ նախագծեր: Իրականում շատ դյուրին է շրջանցել դիվանագիտական հռետորաբանությունը, բայց չինական քաղաքական համակարգը մշտապես պահպանում և ավելի է ուժեղացնում այս գործիքի կիրառումը: Եթե ԿԻ գոյությունը համեմատում են ֆրանսիական «Ալիանս», իսպանական «Սերվանտեսի», բրիտանական «Բրիտանական խորհուրդի», ամերիկյան «Ամերիկյան ակնյուն» դպրոցների և կենտրոնների հետ, ապա անհրաժեշտ է շեշտել, որ Կոնֆուցիուսի անունը, կերպարը և մտքերն ու գաղափախոսությունը բազմաթիվ այլ ոլորտներում են օգտագործվում, անգամ 2010թ. չին անհատ ձեռներեց Լիու Ճիցինի նախաձեռնությամբ ստեղծվեց Նոբելյան

[5] Hu Jintao's report at 17th Party Congress, PRC, Beijing, 24.10.2007 [Электронный ресурс] URL: http://www.chinadaily.com.cn/china/2007-10/24/content_6204564.html

մրցանակաբաշխության չինական այլընտրանք, որն անվանեցին «Կոնֆուցիոսի խաղաղության մրցանակաբաշխություն»:[6] Այս մրցանակաբաշխության միջոցով բացի նրանց, որ փորձ է արվում Նոբելյան մրցանակաբաշխության չինական այլընտրանքը ստեղծել, այլն ընտրելով ամենամյա մրցանակակիրներին, շեշտը դրվում է մարդկանց հավասարությունը, երեխաների պաշտպանությունը, կանանց իրավունքները և ռազմական ուժի բացառումը որպես կանոն ընդունած անհատների վրա: 2011թ.վրացանակակիրնե էր ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը, 2014 թվականին այս մրցանակին արժանացավ Կուբայի առաջնորդ Ֆիդել Կաստրոն, իսկ օրինակ 2012թ. հաղթողներից մեկը Քոֆի Անանն էր:[7] Նաև Չինաստանի սահմաներից դուրս Կոնֆուցիուսը համարվում է չինական փափուկ ուժի քաղաքա-կանության կարևորագույն խարիսխներից մեկը, դրա լավագույն օրինակներն են Կոնֆուցիուսի Ինստիտուտներն ամբողջ աշխարհում, որոնք հանդիսանում են երկրի սահմաներից դուրս գործող հիմնական միջոցները չինարենի և չինական մշակույթի համար, շեշտը դնելով չինարենի, որպես օտար լեզու դասավանդելու վրա:

Կոֆուցիուսի Ինստիտուտներն ղեկավարվում են Պեկինից, հովանավորվում են «Չինարենի Ուսուցումը, որպես Օտար Լեզու-Չինական Ազգային Գրասենյակ»-ի կողմից /汉语办公室/: Ի տարբերություն այսպիսի այլ ծրագրերի, որոնք գործում են Ֆրանսիայում կամ Մեծ Բրիտանիայում՝ համապատասխանաբար «Ալիանս» և «Բրիտանական խորհուրդ», ԿԻ չինական կառավարությունից անկախ չէ, այս ծրագրերն լավ հնարավորություններ են ընձեռում չինացիների և համագործակցող կողմի միջև փոխանակումների համար:

Կոնֆուցիուսի ինստիտուտները (CIs) ներկայումս ամենահայտնի և ամենայն հավանականությամբ Չինաստանի մշակութային դիվանագիտության կարևորագույն գործիք են:

2004 թ. Մայիսին Հանբանը ազդարարեց Համաշխարհային կոնֆուցիուսի ինստիտուտների և Կոնֆուցիուսի դասարանների սկիզբը, առաջին ԿԻ-ն բացվեց Հարավային Կորեայում: Կոնֆուցիուսի

---

[6]Fidel Castro Awarded China's Confucius Peace Prize: December 14-2011. https://www.npr.org/sections/thetwo-way/2014/12/11/370086460/fidel-castro-awarded-chinas-confucius-peace-prize.

[7]Confucius Peace Prize. https://en.wikipedia.org/wiki/Confucius_Peace_Prize

ինստիտուտները, որոնք բաց են լայն հասարակության համար, նպաստում են չինարենի տարածմանը ամենաուղիղ և ամենաինտենսիվ եղանակով, բայց նաև վարում մշակութային դասընթացներ՝ չինական նկարչությունից և խոհարարությունից մինչև չինական մարտարվեստի դասընթացներ: Պաշտոնական տվյալներով 2018թ. վերջին ամբողջ աշխարհում գործում էր 548 կոնֆուցիուսի ինստիտուտ, ինչպես նաև 1193 կոնֆուցիուսի դասասենյակներ, որոնք հիմնականում գործում են տարրական և միջնակարգ դպրոցներում, այս կենտրոններից և դասարաններից 1000-ը գործում են «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի մասնակից երկրներում: Ունենալով Կառավարության զգալի ֆինանսավորումը և աջակցությունը՝ Չինաստանը նպատակ ունի մինչև 2020թ. միայն ինստիտուտների թիվը հասցնել 1000-ի, հենց այս ստրատեգիական կրթական քաղաքա-կանությունն էլ անվանում են ներկայումս «Կոնֆուցիուսի հեղափո-խություն»: Այնուամենայնիվ, զարմանալի չէ, որ արևելքից մինչ արևմուտք բոլոր վերլուծաբանները խիստ մտահոգ են ԿԻ այսչափ սրընթաց զարգացմամբ, քանի որ Չինաստանն իր վարած «չինական քաղաքականությամբ» արդեն իսկ տվել է բոլոր հիմքերը իր ներկայության և կարծիքի հետ հաշվի նստելու համար: Վարել բալանսավորված քաղաքականություն համաշխարհային թատերա-բեմում, ունենալով բազմաթիվ վիճելի հարցեր իր հարևաններից շատերի հետ, միաժամանակ այնպիսի իրադրություն ստեղծել, որ այդ նույն հարևանները ձգտեն Չինաստանի հետ բարիդրացիական ու խաղաղ հարաբերություններ ունենալ, ի շահ սեփական երկրի տնտեսական կայուն զարգացմանը- այպիսին է իրական չինական «փափուկ և բալանսավորված» քաղաքականությունը: Փաստորեն, եթե փորձենք հասկանալ «Կոնֆուցիուսի հեղափոխության» հաղթանակի գրավականը, կարելի է մեկնաբանել այսպես. բալանսավորված արտաքին քաղաքականություն՝ հիմնված տնտեսական զարգացման վրա, որն էլ հիմք է ստեղծել աշխարհը «չինաֆիկացնելու» միակ խոչընդոտը հաղթահարելու համար.ստեղծել հիմքեր, որպեսզի արտերկրում անասելի մեծ լինի չինարենի պահանջարկը: Իհա՛րկե, ակնառու է, որ դա Չինաստանին հաջողվում է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հետազոտությունը նվիրված է Անդրկովկասում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքական շահերին: Հատկապես հետազոտության առարկա է եղել ՉԺՀ-ի քաղաքական և տնտեսական մեթոդաբանության մեկնաբանումը, այդ կովկասյան տարածաշրջանի անվանման ճշգրտումը: Համեմատություններ են արվել այս տարածաշրջանում ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ներկայության միջև: Հոդվածը կենտրոնանում է տարածաշրջանում Կոնֆուցիուսի ինստիտուտների ձեւավորման, զարգացման վրա: Ներկայացվել են չինական «փափուկ ուժի» իրականացման հիմնական նպատակները, առավելությունները, ռեսուրսները, ֆինանսավորման աղբյուրները և թիրախային խմբերը: Հոդվածում նաև ամփոփ ներկայցվում են «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» թեման և Կոնֆուցիոսի անվան Խաղաղության մրցանակը:

Բանալի բառեր՝ Հարավային Կովկաս, Այսրկովկաս, Չինաստան, փափուկ ուժ, Կոնֆուցիուս, Կոնֆուցիուսի Ինստիտուտ, չինարեն:

ЗАКАВКАЗЬЕ, АРЕНА КИТАЙСКОЙ ПОЛИТИКИ: ТЕКУЩАЯ СИТУАЦИЯ И ПЕРСПЕКТИВЫ

Лианна Ананян

Соискатель Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Исследование посвящено политическим интересам Китайской Народной Республики в Закавказье. Особенно предметом исследования была интерпретация политической и экономической методологии КНР, уточнение названия этого кавказского региона. Были сделаны сравнения между присутствием США, России и Китайской Народной Республики в этом регионе. В этой статье основное внимание уделяется формированию, развитию институтов Конфуция в регионе. Были представлены основные цели, преимущества, ресурсы, источники финансирования и целевые группы реализации китайской “мягкой силы”. В статье также кратко затрагиваются тема “Один пояс - один путь” и Премия мира имени Конфуция.

Ключевые слова: Южный Кавказ, Закавказье, Китай, мягкая сила, Конфуций, Институт Конфуция, китайский

SOUTH CAUCASUS, THE ARENA FOR CHINESE POLITICS: THE CURRENT SITUATION AND PROSPECTS

Lianna Ananyan
Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

The research is devoted to the political interests of the People's Republic of China in the Caucasus. Especially the subject of research is the interpretation of the political and economic methodology of the PRC, clarification of the name of this Caucasian region. Comparisons were made between the methodologies of presence of the United States, Russia and the People's Republic of China in this region. This article focuses on the formation, development of Confucius institutions in the region. The main goals, advantages, resources, sources of financing and target groups for the implementation of Chinese "soft power" were presented. The article also briefly touches thems about "One belt One Road" and the Confucius Peace Prize.

Keywords: South Caucasus, Transcaucasia, China, soft power, Confucius, Confucius institute, chinese

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Փիրուզա Սարգսյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Ժամանակակից հասարակություններում քաղաքացիական հասարակության անհրաժեշտությունը դիտվում է որպես իրավական և ժողովրդավարական պետության կայացման և դրա կենսունակ գործառնության կարևորագույն ինստիտուտներից մեկը: Ի՞նչու է այդքան կարևոր քաղաքացիական հասարակությունը: Արդյո՞ք իշխանությունների տարանջատման և փոխզսպման մեխանիզը բավարար չէ դեմոկրատական հասարակության ձևավորման և իշխանության հավասարակշռման համար: Պարզվում է՝ ոչ՞: Դա բավարար է իշխանության ներքին հավասարակշռման համար, սակայն